



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 10886

«19» 06 2017

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ 22.12.2014թ. № 24187 ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանում հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով

հրամայում եմ.

1. Հանձնաժողովի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) «Պապին Մուրադյան - ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ (հանձնաժողովի քարտուղար)» բառերը փոխարինել «Սոնա Մելիքջանյան - ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության մեթոդական բաժնի տեսուչ (հանձնաժողովի քարտուղար)» բառերով,

բ) «Ռաֆֆի Քարամյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ» բառերը փոխարինել «Արմեն Խաչիկյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ» բառերով,

գ) «Միքայել Մալխասյան - ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ» բառերը փոխարինել «Մհեր Հակոբյան - ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ» բառերով,

դ) «Արմենակ Հարությունյան - ՌԻՄ նախագահի 1-ին տեղակալ» բառերը փոխարինել «Դավիթ Ափոյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահի տեղակալ» բառերով,

ե) «Նազելի Հայրապետյան - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ՌԻՄ նախագահ» բառերը փոխարինել «Գոհար Զուլիալյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի պատասխանատու քարտուղար» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 22.12.2014թ. № 24188 «Հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողով ստեղծելու և կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2016թթ. ծրագրի մշակման աշխատանքների մասին» հրամանի 2-րդ կետը և այն շարադրել հետևյալ կերպ՝ «Հանձնարարել հանձնաժողովին ապահովել ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 19.02.2015թ. հաստատված «ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների ծրագրի» շրջանակներում համապատասխան աշխատանքների իրականացումը»:

3. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ռեկտոր

Ա.Սիմոնյան